## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ

# ՉԱՐՃԱՐՃՈՒԱԾ ՀԱՐՑ՝ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ

Միացեալ Նահանգներու ընտրանի խաւը առանց բացառութեամբ համամայն են այն տեսակէտին, որ միջազգային կարգը կը ղեկավարուի տնտեսութեան միջոցով, որ համաշխարհային, համարկուած եւ անկախ է, եւ ասիկա ամբողջութեամբ դրական երեւոյթ է:

Սակայն տնտեսական նեղ դիտանկիւնով աշխարհը դիտելու այս գաղափարին դէմ զօրաւոր ընդդիմութիւն կայ ամերիկեան եւ օտար քաղաքականութեան մէջ: Վերջին տասնամեակին դրամագլուխին հոսքի արագութիւնը եւ ուժը պատճառ դարձած են տնտեսութիւններու բարգաւաճման եւ կործանման: Մ. Նահանգներու մէջ փոքր, ձայնաւոր, բայց հզօր ներուժով շարժում մը կը ծնի, որ կը հերքէ այն առածը, թէ մակընթացութիւնը կը բարձրացնէ բոլոր նաւերը: Ծեղք ունեցող նաւերը կը խորտակուին:

Համաշխարհայնացման ազդեցութիւնը վերջին տասնամեակի կարեւորագոյն ժառանգութիւններէն է: Համաշխարհայնացման քարոզիչները բազմազգեան ընկերութիւններու եւ կառավարութիւններու մէջ մէկ կողմէ կ՛ընդունին այդ գործընթացը՝ իբրեւ անհերքելի իրողութիւն, միւս կողմէ՝ «գորգին տակ կ՛ալեն զայն»:

Նոյնն է պարագան Մ. Նահանգներու նախագահական ընտրապայքարին. երկու հիմնական թեկնածուները կը ներկայացնեն նոյն արտաքին քաղաքականութիւնը: Անոնցմէ մէկը պիտի ընտրուի նախագահ եւ պիտի գօտեմարտի համաշխարհայնացման ազդեցութիւններուն դէմ՝ թէ՛ ներքին եւ թէ արտաքին ճակատի վրայ: Սակայն անոնցմէ ոչ մէկը կը խօսի այդ մասին:

Ուաշինկթընի արտաքին քաղաքականութեան առաքելութիւնը եղած է արգիլել կողմնակի հարցերը, ինչպէս՝ քաղաքական-զինուորական, միջամտելու առեւտուրի համաշխարհային համակարգի տարածման մէջ: Իբրեւ արդիւնք՝ Թայուանի կամ մարդկային իրաւանց հարցերը չեն արծարծուիր Չինաստանի հետ երկխօսութեան ընթացքին: Բացառութիւն կը կազմեն այն պետութիւնները, որոնք միջազգային հանրութեան կողմէ ենթարկուած են պատժամիջոցներու եւ զինուորական գործողութիւններու:

Այս ռազմավարութեան արդիւնքն է Պաղ պատերազմի աւարտէն ի վեր Մ. Նահանգներու պետական արտաքին քաղաքականութիւնը՝ Պուշի կամ Քլինթընի վարչակազմին կողմէ վարուած: Երկուքը իրենց կարելին ըրին, որպէսզի Չինաստանի հետ յարաբերութիւնները չխզուին, ինչպէս նաեւ օգտագործեցին հաստատութիւնները, ինչպէս՝ Դրամական Միջազգային Ֆոնտը, այլ պետութիւններու ուժի տարածումը արգիլելու համար: Հանրապետականներու եւ դեմոկրատականներու նախագահութեան շրջանին Ուաշինկթըն գլխաւորած է Իրաքի եւ Եուկոսլաւիոյ դէմ պատերազմը կամ իր հակակշիռին տակ առած է անգործութեան մատնուած տնտեսութիւնները, ինչպէս՝ Ինտոնեզիոյ պարագային:

Ճորճ Տապլեու Պուշ եւ Ալ Կոր ամբողջութեամբ այս նոյն արտաքին քաղաքականութիւնը կը հետապնդեն: Այս գաղափարախօսութիւնը ոչ միայն տարածուած է ամերիկեան ընտրանիի խաւին մէջ, այլեւ համաշխարհային ընտրանիին եւ նոյնիսկ ճարտարարուեստականացած երկիրներուն հասարակութեան մէջ ընդունելութիւն գտած է:

Սակայն անիկա համաշխարհային ընդունելութիւն չէ գտած: Աշխարհի տարածքին կան հաւաքականութիւններ, որոնք բուռն կերպով կ՛ընդդիմանան այս գաղափարախօսութեան: Աւելի՛ն. այս գաղափարախօսութեան իրագործումը շատ դժուար է միջազգային կարեւոր ղեկավարներու համար: Ռուսիոյ եւ Չինաստանի նախագահներ Վլատիմիր Փութին եւ Ճիանկ Ծեմին օրինակներն են այն ղեկավարներուն, որոնք ընդունելով համաշխարհայնացման գաղափարախօսութիւնը՝ շատ ցաւալի կը նկատեն անոր իրագործումը իրենց երկրին մէջ:

Երկու ուժեր համաշխարհայնացման դէմ կը գտնուին: Առաջինը եւ աւելի անմիջականը ազգային շահերն են: Երկրորդը ընկերային այն շարժումներն են, որոնք կը ներկայացնեն այն դասակարգերը, որոնք վնասուած են համաշխարհայնացումէն:

Համաշխարհայնացման առանցքային թեզը այն է, որ առեւտուրի դէմ սահմանները վերացնելով՝ կ՛աւելնայ մարդկութեան ընդհանուր հարստութիւնը: Այս առումով

1.- Տնտեսական բարեկեցութիւնը ցարդ կարեւորագոյն նկատառումն է ընկերային կեանքին մէջ: Համաշխարհայնացման գաղափարախօսութիւնը կը նկատէ, որ ազգային հակումները եւ շարժառիթները նախնական են եւ այն ցանկութիւնը, որ, օրինակ, հնդիկները գերմանական ընկերութիւններու ազդեցութենէ զերծ տնտեսութիւն մը ունենան, հիւանդութիւն մըն է, որ պէտք է բուժուի:

2.- Տնտեսական բարգաւաճումը ցանկալի է՝ անկախ ընկերային քայքայումէ: Մ. Նահանգներ կազմուեցան իբրեւ արդիւնք ընկերային քայքայումի, որ հետագային հաստատուեցաւ անոնց կողմէ: Մինչ ատիկա կը գործէ Մ. Նահանգներու մէջ, յստակ չէ, որ քայքայումը նոյնպէս պիտի գործէ՝ այլուր:

3.- Տնտեսական շահերու բաժանումը նուազ կարեւոր է, քան՝ ազատ առեւտուրի համախառն շահը: Մակերեսային ջատագովները կ՛անտեսեն վնասները եւ ուշադրութիւն կը դարձնեն աճի ընդհանուր աստիճանին: Աւելի հեռատես ջատագովները կ՛ըմբռնեն վնասները եւ կը շեշտեն, որ պէտք է բոլորը օգտուին բարիքներէն, սակայն անոնք կ՛անտեսեն երկիրներու միջեւ կամ մէջ համեմատական աճը:

Կարճ ըսած, համաշխարհայնացման կողմնակիցները պարզօրէն եւ դիտումնաւոր կերպով կ՛անտեսեն քաղաքական իրականութիւնները:

Անոնց համար ազգայնականութիւնը ձանձրոյթ պատճառող խոչընդոտ է: 20րդ դարու կարեւորագոյն դասը այն է, որ աշխատաւորականութիւնը ունի երկիր մը եւ ազգային հաւատարմութիւնը աւելի կարեւոր է, քան՝ դասակարգային հաւատարմութիւնը: Հետաքրքրական է, որ Քարլ Մարքսի յիշատակած խօսքը ներկայիս փորագրուած է Ուոլ Սթրիթի եւ Փենսիլվանիա Աւենիուի մէջ. *«Դրամագլուխը հայրենիք չունի»*:

Իրականութեան մէջ ազգերը կարեւոր են: Նաեւ ազգերու մէջ այն զգացումը, թէ ղեկավարները ազգային շահերը դաւադրաբար կը փոխարինեն միջազգային շահերով, կարեւոր պէտք է նկատուի: Ասիկա թերեւս այնքան կարեւոր չէ այն ժամանակ, երբ բարեկեցութիւնը հասած է իր գագաթնակէտին, ինչպէս ներկայիս Մ. Նահանգներու մէջ, քան տնտեսական անկման ցաւալի շրջանին:

Մ. Նահանգներու մէջ համաշխարհայնացման խանդավառութիւնը չ՛արտացոլուիր Ասիոյ մէջ: Աւստրիոյ մէջ ազգայնական հիմնական եւ հակահամաշխարհայնացման շարժում մը ընտրութեան միջոցով յաջողութեան հասած է: Լատին Ամերիկայի մէջ տեղական շարժումներ, ուսանողներ եւ ուրիշներ սկսած են արտայայտել իրենց կասկածը:

Մ. Նահանգներու ներկայ բարգաւաճումը չի կրնար յաւիտենական նկատուիլ, սակայն հիմնական բարեկեցութիւնը պիտի շարունակուի տարիներ: Այս պատճառով Մ. Նահանգներու քաղաքական ուժականութիւնը թէ՛ ներքին եւ թէ արտաքին իմաստով փոփոխութեան կրնայ ենթարկուիլ: Յառաջիկայ տասնամեակին ամերիկեան աշխարհաքաղաքական ընտրանքներն են՝ նահանջ, ընդհանուր անվտանգութիւն եւ ուժերու հաւասարակշռութիւն:

Այս իմաստով ընտրութիւն պէտք է կատարուի, ոչ թէ պարզօրէն տնտեսութեան համար, այլ՝ անվտանգութեան եւ քաղաքականութեան: Այս հանգրուանին համաշխարհայնացման ջատագովները եւ անոնք, որոնք կասկածի տակ կ՛առնեն այդ գործընթացը, պիտի ճակատին: Այս իմաստով Մ. Նահանգներու նախագահը պիտի մասնակցի այս հակամարտութեան: Ընտրանի խաւը պիտի նկատէ, որ արտաքին քաղաքականութեան իր մօտեցումները ընդհանուր զօրակցութիւն չեն վայելեր:

Հանրապետականները, որոնք օժանդակած են համաշխարհային տնտեսութեան ամրապնդման, պիտի փորձեն պաշտպանել զայն. սակայն դեմոկրատականները պիտի կորսնցնեն մեծամասնութիւնը:

Այսուհետեւ Մ. Նահանգներու մէջ արտաքին քաղաքականութեան մասին բանավէճը պիտի չընթանայ աջ եւ ձախ ուժերու միջեւ, այլ համաշխարհայնացման կողմնակիցներու եւ անոր ընդդիմացողներու միջեւ:

*Քաղուածաբար՝*
*«ՍԹՐԱԹՖՈՐ»ԷՆ*

# ՉԷՅՆԻԻ ՇԱՀԵՐԸ ԿՐՆԱՆ ԱԶԴԵԼ ՔԱՐԻՒՂԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Ծոցը, Կասպից ծովն ու Պալքանները հասարակաց ի՞նչ գիծ ունին: Այս շրջաններուն մէջ ամերիկեան գերիշխանութիւնը կը ծառայէ Տիք Չէյնիի նման միլիոնատէրերու շահերուն:

Իբրեւ Ճորճ Պուշի պաշտպանութեան նախարար՝ Չէյնի 1991ին «Անապատի Փոթորիկ» գործողութեան գլխաւոր պատասխանատուն էր: Հակառակ մարդասիրական իր երեւոյթին, Իրաքի ռմբակոծման հիմնական նպատակն էր Ծոցի ապահովութեան պահպանումը Միացեալ Նահանգներու քարիւղի շահախնդրութիւններուն համար (Իրաքի մէջ ռմբակոծումները տակաւին կը շարունակուին):



«Անապատի Փոթորիկ»էն կարճ ժամանակ ետք *«Ասոշիէյթըտ Փրէս»*ը յայտնեց, թէ Չէյնի կը փափաքէր այդ շրջանին մէջ ընդարձակել Միացեալ Նահանգներու ռազմական դերը, որպէսզի անոնք կարենան սկիզբէն արգելք հանդիսանալ Ծոցի քարիւղի աղբիւրներուն դէմ սպառնալիքներուն:

Ճորճ Տապըլիու Պուշի կողմէ փոխ նախագահութեան թեկնածու նշանակուելէ առաջ, Տիք Չէյնի աշխարհի քարիւղի ծառայութիւններու մեծագոյն ընկերութեան՝ *«Հալիպըրթըն»*ի գործադիր տնօրէնն էր:

Սակայն Ծոցի անկայունութեան պատճառով Չէյնիի եւ իր քարիւղ արտադրող բարեկամներուն ուշադրութիւնը դարձաւ դէպի Կասպից ծով, որ նաեւ աշխարհի քարիւղի կարեւորագոյն աղբիւրներէն մէկը կը համարուի: *«Եու Էս. Նիուզ»*ի եւ *«Ուըրլտ Րիփորթ»*ի տուեալներուն համաձայն, կասպեան քարիւղի ու կազի առատ աղբիւրներուն արժէքը կը հասնի շուրջ 4 թրիլիոն տոլարի:

Ամերիկեան քարիւղի գլխաւոր ընկերութիւնները ներկայացնող Ամերիկեան Քարիւղի Հիմնարկը (հաստատուած Ուաշինկթընի մէջ) կասպեան շրջանը կը նկատէ իբրեւ «Քարիւղի հանքերու մեծագոյն պահեստները ունեցող շրջանը Միջին Արեւելքէն դուրս»:

1998ին Չէյնի քարիւղի մարզին արդիւնաբերութեան գործարարներուն ըսած էր: «Չեմ յիշեր, որ ունեցած ենք կասպեան շրջանին պէս շրջան մը, որ այսքան արագ ժամանակամիջոցի մէջ ռազմավարական այսքան մեծ կարեւորութիւն ունեցած է»:

Սակայն կասպեան շրջանի քարիւղը կարեւոր վտանգներու կ՛ենթարկուի: Ռուսիոյ, Իրանի եւ խումբ մը խորհրդային նախկին հանրապետութիւններու կողմէ շրջապատուած կասպեան «սեւ ոսկի»ն կը տառապի փոխադրութեան փոխ ընտրութեան դժուարութենէն. մէկ կողմէ Ռուսիա կ՛ուզէ, որ կասպեան քարիւղը ռուսական հողերէն անցնելով ուղղուի դէպի Սեւ ծով. իսկ միւս կողմէ. Միացեալ Նահանգներ իրենց կարելին կ՛ընեն, որպէսզի քարիւղատարները անցնին դաշնակից Թուրքիոյ հողերէն:

Ամէնէն խնայողական տարբերակը Իրանէն անցնող ճամբան է, սակայն Իրանի դէմ ամերիկեան պատժամիջոցները թոյլ չեն տար, որ այդ կարելիութիւնը գործադրուի: Տակաւին վերջերս (Յունիսին) Չէյնի *լոպիին*կի երկարաշունչ ու դժուար պայքար մղեց այս պատժամիջոցները ջնջելու համար՝ Իրան - Կասպեան կապի իրագործումը դիւրացնելու նպատակով: 1997ին *«Օյլ Էնտ Կէս Ճըռնըլ»*ը կը հրապարակէր Չէյնիի որդեգրած կեցուածքը, թէ քարիւղի ու կազի ընկերութիւնները պէտք է աշխատին Միացեալ Նահանգներուն հանդէպ անհաճոյ քաղաքականութիւն վարող երկիրներուն մէջ: Այս դիրքորոշումը կը համապատասխանէ Չէյնիի ներկայի կեցուածքին:

Չէյնի կ՛ուզէ նաեւ ջնջել 1992ի «Ազատութեան պաշտպանութեան արարք»ի 907րդ յօդուածը, որ խստօրէն կը սահմանափակէ Միացեալ Նահանգներու օժանդակութիւնը Ազրպէյճանին, որովհետեւ ան հայերուն դէմ կատարած է ցեղային բնոյթի մաքրագործում Լեռնային Ղարաբաղի մէջ:

Ինչո՞ւ Չէյնի կ՛ուզէ անտեսել Ազրպէյճանի գործած մարդկային իրաւանց խախտումները: Որովհետեւ «Հիւլէական գիտնականներու տեղեկագիր»ին համաձայն, կասպեան քարիւղի ամէնէն հարուստ պահեստներու բանալի Ազրպէյճան «իրականութեան մէջ կը նկատուի ազգերու միջեւ տեղի ունենալիք յաջորդ մեծ մրցախաղին կարեւորագոյն վայրը: Ան բռնկող այն շրջանն է, որ իր յատակը ունի *Քլոնտայքի* (*) գանձ մը: Ազրպէյճան քարիւղով օժտուած Պոսնիան է»:

Չէյնիի քարիւղով թաթխուած մատնահետքերը նաեւ կը ծածկեն Պալքանները: Անցեալ տարի *«Հալիպըրթըն»*ի *«Պրաուն Էնտ Ռութ»* բաժանմունքը շահեցաւ տարեկան 180 միլիոն տոլարի համաձայնութիւն մը՝ Պալքաններու մէջ ամերիկեան ուժերը մատակարարելու համար: Պալքաններուն մէջ Չէյնի նաեւ մաս կազմած է *«Լոքհիտ Մարթըն»*ի տնօրէններու խորհուրդին (*«Լոքհիտ Մարթըն»* զինուորական սարքեր շինող մեծագոյն ընկերութիւնն է) եւ Պալքաններուն մէջ գործածուած ռազմաթերքին փոխարինումը կրնայ յանգիլ շուրջ մէկ թրիլիոն տոլարի համաձայնութիւններու:

Պատերազմը հսկայական ձեռնարկութիւն մըն է, եւ Տիք Չէյնի՝ անոր կարեւորագոյն դերակատարներէն մէկը: Նոյն միջոցին ուժանիւթի եւ պենզինի գիները կը շարունակեն բարձրանալ Միացեալ Նահանգներու զանազան շրջաններուն մէջ: Ծոցի մէջ ՕՓԷՔը կը հակակշռէ քարիւղի արտադրութիւնը: Ներդրումներու անկումով մտահոգ Չէյնի կ՛ուզէ, որ ՕՓԷՔ քարիւղի արտադրութիւնը նուազեցնէ, որպէսզի քարիւղի եւ պենզինի գիները կարենան բարձրանալ:

Իր շահերուն համար Չէյնի կ՛ուզէ անպայման աշխարհը պահել ապահով վիճակի մէջ: Ճիշդ է, որ ան փոխ նախագահութեան թեկնածութեան համար հրաժարեցաւ *«Հալիպըրթըն»*ի գործադիր տնօրէնի պաշտօնէն, սակայն իր տնտեսական շահերը Ծոցին, Կասպեան շրջանին եւ Պալքաններուն մէջ պիտի շարունակուին մնալ անփոփոխ:

Չէյնի Պուշի կողմէ ընտրուեցաւ իր վայելած փորձառութեան համար՝ արտաքին քաղաքականութեան ծիրէն ներս: Հետեւաբար կրնանք նախատեսել հանրապետական վարչամեքենայ մը, որ աւելի պիտի միջամտէ շրջաններու մէջ, երբ ատիկա յարմարի Տիք Չէյնիի քարիւղի կամ այլ տնտեսական շահերուն:

*«ՏԸ ՊԱԼԹԻՄՈՐ ՍԱՆ»*

*(*) Քլոնտայքը Քանատայի մէջ եուքոն գետին աղբիւրներէն է: Քլոնտայքը հռչակաւոր դարձաւ 1896ին, երբ անոր մէջ ոսկի գտնուեցաւ եւ հազարաւոր խուզարկողներ ուղղուեցան դէպի հոն: Հետեւաբար կը գործածուի «Քլոնտայքի ճանապարհ» եզրը, որ կը նշանակէ «ճանապարհը դէպի ոսկի»:*

# Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐ ԿԸ ՄՆԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԶԷՆՔԻ ԹԻՒ ՄԷԿ ԱՐՏԱԾՈՂԸ

*Միացեալ Նահանգներու Քոնկրէսի Ուսումնասիրական Սպասարկութեան կողմէ պատրաստուած համաշխարհային զէնքերու առեւտուրի տարեկան տեղեկագիրը դարձեալ ցոյց կու տայ, թէ Ամերիկա կը շարունակէ մնալ զէնքերու թիւ մէկ արտածողը, արտածումներուն մեծ մասը կատարելով դէպի թերաճ երկիրներ: Սակայն տեղեկագիրը կը շեշտէ, թէ յառաջիկայ տարիներուն զէնքերու առեւտուրը կրնայ յատկանշական անկում կրել:*

*Ըստ տեղեկագիրին, անցեալ տարուան ընթացքին զէնքերու համաշխարհային առեւտուրին արժէքը հասած է 30,3 միլիառ տոլարի, որ 2,7 միլիառ տոլար աւելի է 1998ին արձանագրուած առեւտուրի արժէքէն: Վերջին անգամ 1996ին էր, որ աւելի մեծ քանակութեամբ զէնքեր ծախուած են աշխարհի տարածքին: Այդ տարուան առեւտուրին ընդհանուր արժէքը հասած է 31 միլիառ տոլարի, մինչ 1990ականներու սկիզբը այդ գումարը 40 միլիառ տոլարի մօտեցած էր:*

*Անցեալ տարուան տուեալներով, զէնքերու համաշխարհային առեւտուրին մէջ Միացեալ Նահանգներուն բաժինը կը հասնի 36 առ հարիւրի, իսկ Ռուսիա եւ Չինաստան կը շարունակեն կարեւոր դերակատարներ մնալ: Անցեալ տարուան ընթացքին Բրիտանիոյ եւ Ֆրանսայի զէնքի արտածումները զգալիօրէն նուազած են՝ հասնելով յաջորդաբար 900 եւ 800 միլիոն տոլարի, մինչ Գերմանիա, շնորհիւ Հարաւային Ափրիկէի հետ ստորագրուած սուզանաւու մեծագումար համաձայնագիրի մը, շուրջ 4 միլիառ տոլարի արտածումներ կատարած է:*

*Զէնքեր ներածողներու ցանկին մէջ Հարաւային Ափրիկէն գրաւած է առաջին դիրքը, իսկ Եգիպտոս եւ Իսրայէլ գրաւած են յաջորդաբար երկրորդ եւ երրորդ դիրքերը:*

*Տեղեկագիրը կ՛եզրակացնէ, թէ թերաճ պետութեանց մէջ տնտեսական դժուարութիւնները եւ հետզհետէ աւելի սուր դարձող առեւտրական մրցակցութիւնը սկսած է նուազ շահաբեր դարձնել զէնքերու միջազգային առեւտուրը:*

«ՌՈՅԹԸՐԶ»

**ԾԱՆՈՒՑՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ**

**«Ազդակ»ի մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումին բնագիրը ընթեռնլի գիրով (հաստատութեանց պարագային՝ նախընտրաբար պաշտօնական թուղթի վրայ, եւ՝ հաստատուած) ներկայացնել «Ազդակ»ի ծանուցումներու գրասենեակը:**

